ԲԱԺԻՆ 504-Ի ԾՆՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԼԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՑԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ՝

-- աշակերտների նույնացման, գնահատման և/կամ տեղավորման վերաբերյալ ցանկացած որոշման մասին գրավոր ծանուցում,
-- նման որոշումները բողոքարկելու համար անհրաժեշտ տեղեկատվություն,
-- համապատասխան գրառումների ուսումնասիրություն:

ԲԱԺԻՆ 504. ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ըստ Բաժին 504-ի արվող գրավոր բողոքները, որոնք ներառում են հետևյալը, կարելի է փոխանցել դպրոցի ադմինիստրատորին.

-- անհամաձայնություն աշակերտի՝ Բաժին 504-ով գնահատման կամ պլանի առնչությամբ կայացված կամ չկայացված որոշումներին, ձեռնարկված կամ չձեռնարկված միջոցներին,
-- խտրականություն կամ ոտնձգություն աշակերտի իրական կամ ենթադրված հաշմանդամության հիմքով:

Նկատի առեք, որ խտրականության և ոտնձգությունների վերաբերյալ բողոքները պետք է ներկայացվեն տեղի ունեցած վերջին դեպք(եր)ից կամ հավանական խտրականության մասին բողոքատուի կողմից տեղեկություն ստանալուց հետո վեց (6) ամսվա ընթացքում:

Խրախուսվում է խնդիրները լուծել տեղական դպրոցի միջոցով: Սակայն, եթե դա հնարավոր չէ, կարելի է գրավոր բողոք ներկայացնել Ուսումնական ծառայությունների կենտրոնի՝ Բաժին 504-ի հարցերով հանձնակազարին:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՎԵԼՑԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ

Ձեր դպրոցում կամ Ուսումնական ծառայությունների կենտրոնում խոսեք Բաժին 504-ի հարցերով հանձնակատարի հետ:

Շրջանի կենտրոնական գրասենյակներում զանգահարեք կամ գրեք՝

District Section 504 Coordinator
333 South Beaudry Ave., 18th Floor
Los Angeles, California 90017

Հեռախոս՝ (213) 241-7682
Ֆաքս՝ (213) 241-3312

Էլփոստ՝
equitycompliance@lausd.net

Վեբկայք՝
http://achieve.lausd.net/eeco

Հրապարակող՝
Կրթական ոլորտում հավասարության ապահովման հարցերով գրասենյակ
(Educational Equity Compliance Office)
Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջան
(Los Angeles Unified School District)

Հունիս, 2022 թ.
(ARMENIAN)

Կրթական ոլորտում հավասարության ապահովման հարցերով գրասենյակ

LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT • STUDENTS AT THE CENTER

ԲԱԺԻՆ 504-Ը և հաշմանդամություն ունեցող աշակերտները

Բաժին 504
«Հաշմանդամություն ունեցող որևէ անձի... չպետք է մերժվի մասնակցությունը կամ օգուտները դաշնային ֆինանսավորում ստացող որևէ ծրագրում կամ միջոցառումում կամ դրանց շրջանակներում նրա հանդեպ խտրականություն դրսևորվի...»



1973-Ի ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱԿՏԻ ԲԱԺԻՆ 504-Ը ԴԱՇՆԱՑԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՔ Է, ՈՐԸ՝

-- արգելում է մտավոր և ֆիզիկական հաշմանդամությամբ անձանց նկատմամբ խտրականությունը և ոտնձգությունը ծրագրերում և միջոցառումներում, որոնք դաշնային ֆինանսավորում են ստանում ԱՄՆ կրթության դեպարտամենտից,

-- պահանջում է, որ հաշմանդամությամբ աշակերտներին տրամադրվի անվճար համապատասխան հանրային կրթություն:

Ի՞ՆՉ Է ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆԸ

Հաշմանդամության հիմքով խտրականությունը կամ ոտնձգությունը աշակերտին սպառնալու կամ վիրավորելու գործողություն է՝ հիմված հաշմանդամության վրա, որը խոչընդոտում կամ անհնար է դարձնում աշակերտի մասնակցությունը Շրջանի ծրագրերում և միջոցառումներում կամ Շրջանից առավելություններ, ծառայություններ կամ հնարավորություններ ստանալը:

ԲԱԺԻՆ 504-Ի ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Բաժին 504-ի շրջանակներում կարող է մշակվել պլան օգնելու հաշմանդամությամբ աշակերտներին, <u>որոնք իրավասու չեն հատուկ ուսումնական ծառայություններ ստանալու</u>, բայց հնարավոր է՝ հարմարեցումների կարիք ունենան, որոնք կարող են նրանց տրամադրվել ընդհանուր ուսումնական ծրագրում:

ԻՆՉՊԵ՞Ս Է «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ» ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲԱԺԻՆ 504-ՈՒՄ

Աշակերտը ունի հաշմանդամություն, եթե նրա ֆիզիկական կամ մտավոր խանգարումը էապես սահմանափակում է նրա կենսագործունեությունը մեկ կամ մի քանի կարևոր բնագավառներում:

Ի՞ՆՉ Է «ԷԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ»

Էական սահմանափակում նշանակում է, որ աշակերտը «ի վիճակի չէ կատարել կյանքի այնպիսի գործողություններ, որոնք իրագործելի են ընդհանուր բնակչությունում միջին վիճակագրական աշակերտի համար»: Խանգարումը պետք է ինչ-որ չափով եզակի լինի՝ համեմատած մոտավորապես նույն տարիքի միջին վիճակագրական աշակերտի հետ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ «ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ»

Կենսագործունեության կարևոր բնագավառներն ընդգրկում են, առանց սահմանափակումների, ինքնախնամքը, ձեռքերով գործեր կատարելը, քայլելը, տեսնելը, լսելը, խոսելը, շնչելը, սովորելը, աշխատելը, ուտելը, քնելը, կանգնելը, բարձրացնելը, կռանալը, կարդալը, կենտրոնանալը, մտածելը և հաղորդակցվելը:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՇԱԿԵՐՏԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ԸՍՏ ԲԱԺԻՆ 504-Ի

Դպրոցի թիմը Բաժին 504-ով գնահատում կկատարի աշակերտի համար, որը հաշմանդամությամբ պայմանավորված կարող է ընդհանուր ուսումնական ծրագրի շրջանակներում հարմարեցումների կարիք ունենալ: Թիմը պետք է՝

(1) քաջ ճանաչի աշակերտին,

(2) գնահատի աշակերտի հաշմանդամության էությունը և դրա ազդեցությունը աշակերտի կրթության վրա,

(3) հաշվի առնի աշակերտի մասին տարբեր աղբյուրներից վերցված բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են հարցին,

(4) մշակի Բաժին 504 պլան, եթե աշակերտը բավարարում է պահանջները, և անհրաժեշտ են հարմարեցումներ:

ԲԱԺԻՆ 504-ՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԿՆԵՐ

- Թեստերի անցկացման եղանակի փոփոխություն
- Դասասենյակում աշակերտին առջևում նստացնելը
- Վարքի օժանդակման պլանի մշակում
- Լրացուցիչ ուսումնական պիտույքների օգտագործում